

25.386.

Բ. ԹԱԴՎՈՐՅԱՆ

ՏԵՏԵՍԱՎԱՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ
ԿԻՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ —
ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԻ
ԱՂԱՎԱԴՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

17 APR 2013

25.386

05 JAN 2010

3327

Բ-13

ԱՀ

Թ. ԹԱԳՎՈՐՅԱՆ

ՏՆՏԵՍԱՎԱՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ—
ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԻ
ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐԻ ԴԵՍ

1783



1981 8 Ե Բ Ե Ա Ա
15119-52

ՊԵՏՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1769
ԳԼՈՎԼԻՏ 6638(Բ)
ՊԱՏՎԵ 4075
ՏԻՐԱԳ 3000

ՏՆՏԵՍԱՎԱՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌԱՄԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԻ ԱՂԱՎԱՀՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

1. ՆՈԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ընկեր ՄՏԱԼԻՆԸ, 16-րդ համագումարում հետևից
յալ կերպ եր բնորոշում նոր տնտեսական քաղաքակա-
նության վերջին շրջանը:

«ՆԵՊ-ը կիրառված է կյանքում կապիտալիզմի,
կապիտալիստական տարրերի վրա այցիալիզմի հաղ-
թանակն ապահովելու համար: Անցնելով հարակիման
ամբողջ ֆրանտով՝ մենք դեռ չենի վերացնում ՆԵՊ-ը,
քանի վոր մասնավոր առեվտուրը և կապիտալիստական
տարրերը դեռ մնում են, ապրանքաշրջանությունը
և դրամական տնտեսությունը դեռ մնում են, բայց մենիք
անվիճելիորեն վերացնում ենք ՆԵՊ-ի սկզբանկան շրջանը,
ծավալելով նրա հետագա շրջանը, ՆԵՊ-ի ներ-
կա շրջանը, վորը և հանդիսանում է ՆԵՊ-ի վերջին
շրջանը» («Համերումկուսի Կննուկոմի ժաղ. հաշվետվու-
թյունը», Պետիրատ, յերկրորդ տպագր., 1931. թ., էջ
45, ընդգծումն իմս և. Թ. Թ.):

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վե-
րակառուցումը, համատարած կոլեկտիվացման ծավա-
լումը և նրա հիման վրա, կուլակության վերացումը
վորագես դասակարգի, արդեն բնորոշում են սոցիալիս-
տական սեկտորի տեսակարար կշռի գերակշռությունը
մասնավոր սեկտորի նկատմամբ ու ապահովում են ժո-
ղովրդական տնտեսության պլանային աշխատանքների
հաջող ընթացքը: Այսպես մինելով հանդերձ՝ մասնա-
վոր սեկտորի գոյությունը դեռ պահանջում է շուկա-

յական փոխարաբերությունների պահպանումը, դրան տնտեսության պահպանումը:

Պարզ է, վոր յեթե ՆԵՊ-ի մնում է, յեթե մենք դունկում ենք նրա վերջին շրջանում, տնտեսավարական սկզբունքը վորտես ձեռնարկությունների ու արտադրությունների գեկավարման կարեոր մի մեթոդ՝ մնում է և պետք է լիակատար կերպով ամրանա:

Պետք է ասել, վոր մեր սլրակոթիվայում՝ կուսակցության գլխավոր ղիծը անտեսավարական սկզբունքի կերպուման ասպարիզում աղավաղումների յև յենթարկվել:

Այնու չեն ուզում ըմբռնել այն պարզ ճշմարտությունը, վոր չուկայական հարաբերությունների կարգավորման խնդրում ապահովված ե պրոլետարական սեկտության ղեկավարող դերը, վոր համայնացված սեկտորի գերակշռությունը նվազեցրել և փոքրացրել ե մասնավոր սեկտորի նշանակությունը մեր ժողովրդական տնտեսության մեջ:

Յելենով համայնացված սեկտորում զոյություն ունեցող ապրանքային փոխարաբերություններից, առջերը հանդում են «կոնդրատևակալության» և «յուրովշչինայի» տեսակետներին:

«Զախության» մանկական հիմանդրությամբ վարակվածները, ժխտելով ՆԵՊ-ի վերջին շրջանի գոյությունը, հակադրում են տնտեսավարական սկզբունքը պահնի և ջատագովում են տնտեսավարական սկզբունքի վերացման անհրաժեշտությունը: Դա «Ճախ» քյալբայողություն է, վոր փորձում ե միանդամեց թուել ՆԵՊ-ի շրջանի վրայից— հասնել սոցիալիզմի շրջանին, առանց ըմբռնելու, ՆԵՊ-ի վերջին շրջանի առանձնահատկությունները: «Զախ»ը՝ վիաստորին ձեվա-

կերպում են մեր պրակտիկայում թույլ տված աղավաղումները և հանդես են դալիս նրանց ջերմ պաշտպանների դերում: Հակադրելով պլանին թե՛ ապրանքային փոխարաբերությունների գոյության ինդիքը, թե՛ ուռելու գոյությունը և թե՛ տնտեսավարական սկզբունքը, նրանք («Ճախերը») չեն ուզում հասկանալ ամբողջ Փրոնտով սոցիալիստական հարձակման իմաստը, յերբ անհրաժեշտ ե ուղարկութել և' խորհրդային առելութուրը, և' ուռելու կոնտրոլը սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն ավարտելու համար:

«Ճախերը» կարծում են, վոր տնտեսավարական սկզբունքը մի ժամանակավոր միջոց է, պլանի զարգացման հակասող մի միջոց: Այնու տնտեսավարական սկզբունքի ամրացման մեջ տեսնում են չուկայական հարաբերությունների զարգացումը, չուկայի ուժեղացումը: Նրանք չեն հասկանում, վոր տնտեսավարական սկզբունքի ամրացումը նշանակում է միաժամանակ պլանի ամրացումը:

Տնտեսավարական սկզբունքի կերպումը, գրամական շրջանառության կարգավորումը և վարկային սիստեմի աշխատանքների նորմալ ընթացքը խոչը նշանակություն ունեն ներկա շրջանի սոցիալիստական շինարարության խնդիրներն իրագործելու համար:

Հնդամյա պլանի հաջող կատարումը, մի շարք ճյուղերում հնդամյակի կողմից նախատեսված պլան ների կատարումն ու գերակատարումը, դեռևս հնդամյակի Յ-րդ տարվա ընթացքում (նավթարդյունաբերություն, գյուղատնտեսության կոլեկտիվացումը, ածխարշյունաբերություն և այլն), սուր կերպով մեր առաջ դնում են ֆինանսական վողջ սիստեմի աշխատանքների վերակառուցումը մեր ժողովրդական տնտե-

սուրյան գարգացման պահանջմերին հարմարեցնելու
համար :

Ժողովրդական անտեսության սոցիալիստական
զերակառուցման խնդիրներն իրագործելու ընթացքում
մենք հետապնդում ենք մի Հիմնական նպատակ՝ հաս-
նել ու անցնել կառկիտալիստական յերկրներին, քանի
վոր,

«Մենք առաջարկում յերկրմերից յետ ենք միացել
50—100 տարով: Մենք այդ տարածությունը վագելով
պետք է ամենին 10 տարում: Կամ մենք այդ կկատա-
րենք, կամ մեզ կհօգմեն»:

«Վոչ մի բայլ դեպի յետ նախազծված պլաններից,
կատարենք ու գերակառարենք հեղամյակի յերրորդ
վճռական տարվա պլանը» (ՍՏԱԼԻՆ):

Վարկային սիստեմը և մասնավորապես պետական
բանկը հանդիսանում են մի միջոց կոռուկցության և
խորհրդային իշխանության ձեռքում՝ ժողովրդական
անտեսության վերակառուցման պլանի կատարումը
վերահսկողության յերթարկելու համար: Պետական
բանկը, մի կողմից՝ իր Փինանսական ողբությամբ նը-
պատում և ժողովրդական անտեսության սոցիալիս-
տական վերակառուցման գործին, մյուս կողմից՝ նա
հնարավորություն ունի աշխատանքի նոր ձեվերի դա-
ստիքորման հետեւանքով հսկելու արդՓինականների
կառարման վրա և ժամանակին աղղանշոն տալու
ձեղըլածքները վերացնելու համար:

Պետական բանկը, նայած վոր մի տարի աշխատել
ն 1930 թվի վարկային ռեֆորմի պայմաններում, չի կա-
րողացել լրիվ կերպով կատարել իր վրա դրված պար-
տականությունները: Վարկային ռեֆորմն աղավազման
և յենթարկվել և այդ աղավազումը բացասաբար և ան-

դրադարձել թե՛ վողջ ֆինանսական սիստեմի աշխա-
տանքների և թե՛ անտեսական կազմակերպությունների
աշխատանքների վրա: Պահանջվում է վեցանային պե-
տական բանկի աշխատանքի սիստեմն ու վերակառու-
ցել վերջինն այն հաշվով, վոր հնաբավոր լինի տպա-
հովել ժողովրդական անտեսության սոցիալիստական
վերակառուցման հաջող ընթացքը:

Նախ քան վարկային նոր ռեֆորմի մասին խոսելը,
անհրաժեշտ ենք համարում պարզաբանել 1930 թվի
վարկային ռեֆորմի հիմնական սկզբունքները, նրանց
աղավազման յերեկույթները, վոր պարզ լինի, թե
ինչո՞ւ այժմ դրվում է վարկային ռեֆորմի փոփոխու-
թյան խնդիրը:

2. 1930 ԹՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԸ ՑԵՎ ՆԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1930 թվի վարկային ռեֆորմը միայն պետական
բանկի աշխատանքի սիստեմի փոփոխման հետ կապված
տեխնիկական մի խնդիր չեր: Ռեֆորմը հանդիսանում
էր մեր ժողովրդական տնտեսության սոցիալիստական
վերակառուցման անքանակ մի միջոցը, նրա գարգաց-
ման նպաստող մի լծակը: Ժողովրդական անտեսու-
թյան վերականգման շրջանից սոցիալիստական վերա-
կառուցման շրջանին անցնելը, համայնացված սեհտորի
տեսակարար կշռի ուժեղացումը, պարզ ե, վոր պիտի
աղանջ զնելին վերակառուցել ֆինանսական ամբողջ
աշխատանքը՝ համաձայն ՆԵՊ-ի վերջին շրջանի և սո-
ցիալիզմի առաջին շրջանի պահանջներին: Պետք եր վե-
րակառուցել պետական բանկի աշխատանքի մերող-
ները և ամբողջ ֆինանսական սիստեմն այն հաշվով,
վոր հնաբավոր լիներ սոցիալիստական նոր պայման-

ներին հարմարեցնել նրանց աշխատանքի բովանդակությունն ու ընթացքը:

Ի՞նչպիսի հիմնական խնդիրներ եր դրվում 1930 թվի հունվարի 30-ին Համամիութենական կենտրոծկոմի և Ժողկոմի ուժում կողմից հաստատված վարկային ռեփորտի վերաբերյալ վորոշման մեջ:

1. Ստեղծել պարզ փոխարարերություններ պետքանի և տնտեսական կազմակերպությունների միջև:

2. Ամրացնել բանկերի աշխատանքի ոլլանային ընթացքը:

3. Բանկային ապարատի ոժանդակությամբ ամրացնել տնտեսական կազմակերպությունների ու հիմնարկությունների պահանային աշխատանքները:

4. Ստեղծել անմիջական կապ բանկային վարկագործման և առանձին տնտեսական կազմակերպությունների կողմից արդինապահների կատարման միջև:

5. Լայնացնել ու խորացնել տնտեսավարական սկզբունքն արտադրություններում և ձեռնարկություններում:

6. Մուտեցնել վարկալորող կազմակերպությունները ըրչաններին:

7. Գետական բանկը գարձնել հետագայում վորպես կարճատև վարկի միակ հաստատություն և սոսցիալական հաշվառման որդան:

8. Բոլոր հաշվարկումները տնտեսական կազմակերպությունների միջև՝ կենտրոնացնել բանկերում:

9. Զարկ տալ անդրամական հաշվարկումներին և այլպիսով նպաստել դրամանիշների ըրչանառության կրճատմանը:

Հիմնական, եյական մոմենտներից մեկը, վորը կազմում եր 1930 թ. վարկային ռեփորտի հիմքը և վորը

ծառարում եր վորպես յելակետ բանկային աշխատանքի հիմնական վերակառուցման համար՝ դա առևտրական վարկի լիկվիդացիան եր:

«Մինչեղ այժմ ապրանքները վարկի կարգով բաց քողնելու սիստեմը համայնացրված սեկտորում, վոր առաջ և բերում վարկի ձևակերպման դժվարությունները և բարդացնում ե նրա պլանավորումը, պետք ե լիկվիդացիայի յենք-արկել և փոխարինել բացառապես բանկային վարկավորմամբ: Խոկ բանկային վարկավորումը, պետք ե այնպես կազմակերպարձ լինի, վոր վարկի կարիք ունեցաղ արտադրությունները և կազմակերպությունները վարկ ստանան, առանց միջնորդ ողովների, — ասված ե Համամիութենական կենտրոնական գողկումը 1930 թվի հունվարի 30-ի վորոշման մեջ (Ընդգծ. իմո ե. թ. թ.):

Առևտրական վարկի (комерческий кредит) լիկվիդացիան հնարավոր եր միայն սոցիալիստական շենքարտության զարդացման ու ծավալման պայմաններում: Աշխատանքի նման սիստեմ յերեք չե կարելի կազմակերպել կապիտալական յերկրներում: Այս կնշանակեր ժխտել կապիտալիստական իրավակարգի դոյությունը. կապիտալիստական իրավակարգում առեվտրական վարկը բուրքուազիայի դոյության հիմնական միջոցներից մեկն ե, չուկաների գրավման, յեկամուտների կուտակման, իշխանության պահպանման համար մղվող պայքարի ամենաուժեղ ազդեկներից մեկը:

Բացի առեվտրական վարկի լիկվիդացիան, վարկային ռեփորտն առաջ բերեց նաև ուղղակի բանկային վարկավորման սիստեմը, վերջինի ողակները կապելով անմիջական արդյունաբերության հետ: Ինչո՞ւ համար

Եր կատարվում այդ: Ցույց տալու համար առելտրա-
կան վարկի գոյության պրակտիկայից վերցնենք մի ո-
րինակ և տեսնենք, թե ինչպիսի բարդ ճանապարհով
եր կատարվում վարկի ձևակերպումը և ինչպիսի վե-
նասներ ունեք նա:

Սպառողական կոռապերացիայի կաղմակերպչական
կառուցվածքն ուներ հետեւյալ ձևը — Խորհ. Հայոս-
տանում՝ Հայկոսպ, Անդրկովկասում՝ Զակոսյուզ,
Մոռկվայում՝ Յենտրոսոյուզ: Մինչեւ վարկային ռե-
փորմը, Հայկոսպն իրավունք չուներ անմիջապես ար-
դյունաբերությունից ապրանքներ ստանալ: Ապրանք-
ներն ստացվում եյին Թիֆլիսից—Զակոսյուզից, վարն
ապրանք հանձնելու ժամանակ ստանում եր Հայկոսպից
արժեքի գեմաց 2—3 ամիս ժամկետով մուրհակ: Զակ-
ոյուղն իր հերթին ապրանքն ստանում եր Մոսկվա-
յից—Յենտրոսոյուզից, արժեքի դիմաց տալով 2—3
ամիս ժամկետով մուրհակ: Յենտրոսոյուղն իր հերթին
տալիս եր 2—3 ամիս ժամկետով մուրհակ արդյունա-
բերությանը և ստանում ապրանքը: Յեթե սահմանա-
փակենք մեր ռեսումնասիրությունը միայն մուրհակներ
տալու աշխատանքներով, կարծես թե գոտնդավոր վո-
չինչ չկա: Բայց տեսնենք, թե ի՞նչ եր կատարվում
մուրհակներ տալուց հետո:

1. Արդյունաբերությունը ներկայացնում եր ՅԵՆՏՐՈ-
ՍՈՅՈՒԳի մուրհակը պետական բանկին և նրա հիման վրա
ստանում եր առելտրական վարկ: 2) Յենտրոսոյուզը
ներկայացնում եր պետական բանկին Զակոսյուզի մուր-
հակը և ստանում եր առելտրական վարկ: 3) Զակոս-
յուզը ներկայացնում եր պետրանկին Հայկոսպի մուր-
հակը և ստանում եր առելտրական վարկ: 4) Հայկոս-
պը ներկայացնում եր պետական բանկին իր ստորին

յանցի մուրհակները և ստանում եր առելտրական
վարկ:

Ինչպես տեսնում ենք, միևնույն ազգամնջը վտրելա-
վորման եր յենթարկվում միաժամանակ պետական
բանկի մի շարք բաժանմունքների կողմից, (այսու-
ղեղքում չորս անդամ), չորրորդիվ վարկավորման այն
սիստեմին, վորը դոյություն ուներ մինչեւվ վարկային
ռեփորմի կիրառումը: Այս հանդամանքը պարզ է, վոր
չափազանց բացասական ազգեցություն եր գործում
դրամական ըրջանառության կարգավորման վրա և
խիստ բարդացնում ու դժվարացնում սլլանավորման
աշխատանքները:

Ուստի, առելտրական վարկի լիկվիդացիան վոչ
միայն հանդիսանում եր կավետավայստական ֆինանս-
կան սեւտեմբի աշխատանքի ձևերի վերացումը, այն
ուներ մի այլ նպատակ— կարգավորել դրամական ըրը-
ջանառությունը, վերացնելով միջնորդ ողակների վար-
կավորման աշխատանքները:

Վոչ պահաս նշանակություն ուներ և տնտեսավա-
րական սկզբունքի կիրառումը վարկային ռեփորմի պայ-
մաններում: Ահա ի՞նչ եր ասում այդ մասին Համա-
միութենական Կոմկուսակցության կենտրոնական Կո-
միտեն իր 1929 թվի դեկտեմբերի 5-ի վորոշման մեջ:

«Արտադրությունների տնտեսավարական սկզբուն-
քին անցնելը լիովին իրեն արդարացրել ե: Տնտեսա-
վարությունը պարզում ե արտադրությունների իսկա-
կան դեմքը, նպաստում ե արտադրության ոացինա-
լացման, մատակարարման և վաճառահամեման նիշտ
կազմակերպման և միաժամանակ առաջ ե քերում բյու-
րկատագմի և բափրփածության դեմ խոշոր հակա-
գեցությունը»:

«Արտադրություններում տնտեսավարության հետեւլողական կիրառումը պահանջում է, վոր միջոցներ ձեռք առնվիճ պարզելու համար առանձին ցելսերի ու բաժինների աշխատանիքի հաջողությունները և նեղգովածքները»: (Постановление ЦК ВКП (б) от 5/XII 1929 г. о реорганизации Управления промышленностию).

Հրագուարակ բերելով վարկավորման մի նոր ձեւ՝ վարկային ռեֆորմը հետապնդում է միաժամանակ և տնտեսավարական սկզբումքի ամրացման և նրա լայն տարածման նպատակը:

Ուշադրավ և խոչոր նշանակություն ունեցող մոժենաներից մեկը, վորը վարկային ռեֆորմը հրապարակ բերեց, հանդիսանում է այն նոր գերը, վորի մեջ մտնում է պետական բանկը—վերահսկողության յենթարկել ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար կատարվող աշխատանքները և աղդանշան տվյալի դեր կատարել պետության ձեռքում, ժամանակին ճեղքվածքները վերացնելու համար: Բացի այդ՝ նա վերածվում է իրոք ժողովրդական տնտեսության հաշվառման միակ կենտրոնի, սոցիալիստական հասարակության վողնաշարի:

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման զարգացման պայմաններում, արդյունաբերության և զյուլատնեսության մեջ սոցիալիստական սեկտորի ուժեղացման ու տեսակարար կշռի բարձրացման ընթացքում և կապիտալիստական տարրերի գեմ ծավալվող վնական հարձակման պայմաններում՝ 1930 թվի վարկային ռեֆորմը գալիս եր վելակառուցելու բանկային—ֆինանսական տիստեմը և վերածելու այն սոցիալիստական շինարարության աշխատանմներին

նպաստող, նրանց զարգացումը արագացնել սփստեմի:

Բայց ունենալով իր հիմքում վերոհիշյալ նպաստակները, վարկային ռեֆորմի մի տարվա կիրառման ընթացքում հայտնաբերվեցին մի շարք բացասական յերկույթներ և աղավաղումներ, ինչպես պետական բանկի ներսում, նույնպես և տնտեսավարական կաղմակերպությունների աշխատանքների ընթացքում: Կանգ առնենք աղդ յերելույթների վրա:

3. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԻ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐԸ

Վարկային ռեֆորմի կիրառման ընթացքում առաջ յեկան մի շարք բացասական կողմեր, ինչպես և տեղի ունեցան աղավայումներ, վորոնք պարզ եւ պիտի բացասարար անդրադառնային ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման աշխատանքների նորմալ ընթացքի վրա: Թվենք այդ բացասական յերեվաւյթներից հիմնականները:

1. Աղտոմմատիզմ
2. Վարկավրում «պլանի տակ»
3. Տնտեսավարական սկզբունքի խախտում
4. Քանակական և վորակական ցուցանիշների անկում
5. Վարկերի ողտագործումը ոյլ նպաստակների համար
6. Գրամարկային կանոնների խախտում
7. Աղրանքային վարկի գոյությունը
8. Հաշիվների վոչ ճիշտ ձեփակերպումը
9. Հաշիվների ուշ ներկայացումը
10. Բանկային աշխատանքի անկաղմակերպ լինելը
11. Պետական բանկը պլանավորող որդանի վերա-

ծելը, պլանավորող կազմակերպությունների անտեսություն կարևորման աշխատանքներում :

Այս Հիմնական բացասական յերեխույթները արդյունք ենին մի կողմից «անբավարար դեկավարության», մասնաւորապես միանգամայն ուժիւայար հայապատրաստական աշխատանքի վարկային ուժորմի կիրառման համար և մյուս կազմից ուղղակի վճառարարության» (Համամիութենական ժողկոմի խորհի 1931 թվի 203-ի վորոշումից) : Ինչումն եր արտահայտվում ավտոմատիզմի բացասական կողմը : Այդ պարզելու համար՝ տեսնենք, թե ինչպես եր կատարվում հաշիվ-ֆակտորաների ձեւակերպման աշխատանքը : Հայության 1930 թվի վարկային ուժորմի, արդյունաբերությունը ապրանքը յերկաթուղուն հանձնելուց անմիջապես հետո, ներկայացնում եր պետական բանկին իր հաճախորդի անունով դրված հաշիվ—ֆակտորան և անմիջապես ստանում եր նրա արժեքը :

Բայց մեքենայորեն մոտենալով հաշիվ—ֆակտորաների ձեւակերպման աշխատանքներին՝ պետական բանկի պրակտիկայում հայտնաբերվեցին հետեւյալ բացասական մոմենտները :

1. Կազմը բնողի և վաճառողի միջնի խղմեց : Արդյունաբերական կազմակերպությունները դադարեցին հետաքրքրվելու իրենց հաճախորդներով, հետեւյալ կնքված պայմանագրերի կետերի ճիշտ և ժամանակին կատարմանը, քանի վոր նրանք վատահ եյին, վոր ամեն տեսակի պրանքի համար ոլետական բանկը պատրաստ և արժեքը վճարելու : Այս հանդամանքը բացասական իմաստով անդրադասվ արդյունաբերական կաղաքակերպությունների աշխատանքների վրա և տռաջ թե-

րեց թե քանակական և թե վորակական ցուցանիշների անկում :

Ապրանքների վորակը վորոշ գեղաքերում վատացալ, առանձին ձեռնարկություններում քանակը պակասեց և դների իշխեցման քաղաքականությունը խախտվեց :

2. Գնողն այնպիսի գրության մեջ եր ընկնում, երբ պետական բանկը, առանց նրա համաձայնություն հարցնելու, նրա կոնտոկորենտ հաշիվը դուրս եր դում զանազան գումարներ և այսպիսով խախտում եր դողի սեփական ծրագրի նորմալ ընթացքը :

3. Պետական բանկը, մեքենայորեն պարտագրելով իր հաճախորդների հաշիվները ֆակտորաների արժեքներով, հաճախի դուրս եր դայիս վերջինների համար սահմանված լիմիտների սահմաններից և արագիսով խանգարում եր իր ֆինանսական պլանի կատարումը : Վեր դա այսպես և, ապացուցվում ե այն փաստով, վոր պետական բանկի հաճախորդները ամբողջ Միության մեջ ստացել են 1,5 միլիարդ ռուբլի ավելի վարկ, քան սահմանված ե յեղել : Պարզ ե, վոր դա չափազանց աննորմալ յերկություն և պետք է ունենար խոշոր բացասական ազդեցություն, ժողովրդական տնտեսության ընդհանուր ֆինանսական պլանի կատարման վրա :

Պարզ ե, վոր ավտոմատիզմը—դա վարկային ուժորմի եյուրյունն աղավաղով բանակական ու վարակական ցուցանիշների անկման նպաստով, գնողին և վաճառողին լոկ հանդիսանեսների վերածող և ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ֆինանսական պլանի նորմալ ընթացքը խախտող իմաստական հանգամանքներից մեջն եր հանդիսանում :


Ավտոմատիզմը իր հերթին արդյունք եր պետական
 բանկի կողմից կիրառվող վարկավորման սիստեմի :
 Փոխանակ վարկավորումը կազելու կազմակերպու-
 թյունների ու հիմնարկությունների առանձին տնտեսա-
 կան ձեռնարկումների իրագործման հետ, նա կատար-
 վում եր ընդհանուր պլանների հիման վրա : Խոսեն,
 որինակներով : Մի վորեե ձեռնարկություն կամ կազմա-
 կերպություն ներկայացնում եր պետական բանկին իր
 արդֆինավանը, վորի քննության ժամանակ պարզված՝
 ե, վոր 500.000 ռուբլու ապրանք արտադրելու համար
 անհրաժեշտ ե 200.000 ռուբլու վարկ : Պետրանկը, իւ-
 նելով ընդհանուր ծրագրից, սահմանում եր
 200.000 ռ. վարկի վմիտը և մինչեվ այդ ու-
 ժարին հասնելը առանց արգելքի վարկ եր սա-
 լիս տվյալ ձեռնարկության կամ հիմնարկությանը :
 Միայն այն ժամանակ, յերբ լիմիտը վերջանում եր և
 մերժապահությունը ներկայացնում եր նոր վարկի պա-
 հանց, պետական բանկը հրապարակ եր գալիս և գործի
 անցնում պարզելու գիրվարկալորման պատճառները :
 Յել ինչ եր պարզվում . 100-ից 99-ի դեպքում գերվար-
 կավորման յենթարկված ձեռնարկությունը չի կատարել
 իր արդֆինավանը, չի տվել պետությանն իր ծրագրած
 500.000 ռուբլու արտադրանքը, բայց և այնպես ստա-
 ցել ե այդ աշխատանքի համար հատկացված 200.000
 ռ. վարկը : Կոնկրետ շատ որինակներ կարող ենք բերել
 մեր պայմաններից : Թվենք մի յերկուուր : Կաշվարդը
 կատարելով իր ծրագիրը միայն 60 տոկոսով, 1931 թ.
 առաջին յեռամսյակի ընթացքում ստացել ե 7.000 ռ.
 սահմանված լիմիտից ավելի վարկ : Ավելի ցայտուն և
 կոնսերվի դործարանի դրությունը, վորը կատարելով
 իր առաջին յեռամսյակի պլանը 74,2 տոկոսով ստացել

և պետքանկից 3½ անգամ ավելի վարկ : Այդ վարկը
 փոխանակ ողտագործվելու արդֆինավանով նախատեսն-
 ված արտադրանքի քանակը կրկնապատկելու ու յերա-
 պատկերու համար, գործադրվել ե հում նյութի ալի-
 լորդ և ողանով չնախատեսնված պաշարներ պատրաս-
 տելու : Այս բոլորը հնարկօր եր և կատարվում եր այն
 որարդ պատճառով, վոր պետական բանկը հրապարակ
 եր գալիս ու ձեղքվածքները վերացնելու համար աղ-
 դանշանք-ի ձայն եր հնչեցնում միայն ըերվարկավոր-
 ման դեպքում, այսինքն սխալը կատարվելուց հետո, և
 վոչ մի հնարավորություն չուներ իր աշխատանքի
 պրակտիկայով կանխելու կամ թույլ չտալու այդ :
 Հաշիվ—Փակուրաները գալիս ելին այլ քաղաքներից և
 նա իրավունք չուներ չձերվակերպելու նրանք, նույնիսկ
 այն դեպքում, յերբ հաճախորդը լիմիտ չուներ : Վար-
 կային ուժորմի հիման վրա կավճված հրահանդը պար-
 տադրում եր կատարել այդ :

1783

Պարզ ե, վոր այս աշխատանքների ասպարիզում
 խոչոր նշանակություն ուներ պետական բանկի ապա-
 րատի ճկունությունը, նրա կողմից ժամանակին վար-
 կային ուժորմի կիրառմանը նախապատրաստված լի-
 նելու : Պետք ե շեշտել, վոր այս ասպարիզում դեռ շատ
 անելիքներ կան : Նախ, պետական բանկի ապարատում
 կան մարդիկ, մասնագետներ—վորոնք կարծում են, թե
 վարկային ուժորմը—դա լոկ բանկային աշխատանքի
 փոփոխման տեխնիկական մի ձեվ ե, և չեն ըմբռում
 նրա քաղաքական—տնտեսական խոչոր նշանակու-
 թյունը մեր ժողովրդական տնտեսության զարգա-
 ման համար : Այստեղից բղխում են այն բարդ բանկա-
 յին—հաշվապահական ձևերը, վորոնք կիրառվում են
 կյանքում պետական բանկի կողմից և վորոնք միայն

15/19-1



կարող են նպաստել վարկային ռեֆորմի աղավարմանը:

Հաշիվների վոչ ձիշտ ձևակերպումը, ուշ ձևակերպումը, կամ ամիսներով անկատար գրության մեջ ուղահելը՝ սովորական յերեվույթիներ ելին: Հաճախ լինում ելին դեպքի, յերբ մի կազմակերպության հասանելիք գումարները վոխանցվում ելին այլ կազմակերպության հաշվին՝ այն պարզ պատճառով, վոր անունների մատավոր նմանություն գոյություն ուներ: Արինակի հաճամար Հայութաշնորհ ստացել եր պետական բանկի հայաստանի գրասենյակից 75.000 ռ. վարկ, յերբ այդ գումարը պետք է ստանար լենջնարդը այն պարզ պատճառով, վոր անունների վորոշ նմանություն կար (Արմգոստրոյ և Արմգորստրո), նման և այլ սխալներ բացասարար ելին անդրադառնում պետական բանկի հաճախորդների աշխատանքների վրա: Սրան պիտի ավելացնել և այն բյուրոկրատուկան մթնոլորտը, վոր գոյություն ուներ պետական բանկի ներսում:

Վարկային ռեֆորմի գոյության պայմաններում պետական բանկը վերցրել եր իր վրա նաև մի չափազանց պատասխանատու ու կարեվոր աշխատանք—պանավորման յենթարկել ժողովրդական տնտեսության զարդարումը, անտեսելով այդ աշխատանքների ասլարիզում պլանավորող կազմակերպությունների աշխատանքը:

Կարծես թե պետական բանկը մի փակ բաշխիչ եր, պարիսակված ինքն իր մեջ, վորն ինքնուրույն կերպով փորձում եր պլանավորել ժողովրդական տնտեսության զարդարումը: Արդի ֆինանսները ներկայացվում ելին բանկին, վերջինս իր հայեցողությամբ սահմանում եր վարկավորման լիմիտները, կրճատում եր ծրագրները այնպես, իր ամփակությունը մեջ մեջին կազմակերպությունների արդիները անունները, կազմում եր յեռամոյա վարկային ծրագրը, վորը և ներկայացնում եր ի հաստատություն թիֆլու—պետրանկի Անդրկովկասյան գրասենյակին: Վերջինս ծրագրիները հաստատելուց հետո, հայտնում եր Հայաստանի գրասենյակին՝ հաճախորդների վարկավորման լիմիտները: Սովորաբար այդ լիմիտները չելին համապատասխանում Հայաստանի գրասենյակի կողմից սահմանված լիմիտներին: Յեթի կոնսերվի որդարանի համար տեղում նախատեսնեած և 300.000 ռ. լիմիտ, վորը հնարավորություն կատեղեր նրա արդինպլանի

մալուծում մտցնելով պլանավորող կազմակերպությունների աշխատանքների մեջ:

Պետքանկը փորձել եր կատարել պլանավորող կազմակերպության դերը, իր ձեռքը վերցնել ժողովրդական տնտեսության պլանավորման պատասխանատվությունը ու կատարել պետական պլանային հանձնաժողովի աշխատանքը, միաժամանակ վոչ վորի հաշվով չտալով իր կատարած աշխատանքների համար:

Միայն պետական բանկում նստած «մասնագետ» վնասաբարները կարող ելին մտածել այսպես և փորձել պետական բանկը վերածելու պլանավորող կազմակերպություններն: Միայն նրանք կարող ելին վարկը գարձնել ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման պլանավորման միակ միջոցը:

Վոր պետական բանկը, իր վրա վերցնելով ժողովրդական տնտեսության պլանավորման աշխատանքը, այդ կատարում եր չափազանց վատ, ուս անվիճելի յէ: Պարզ լինելու համար վերցնենք մի փոքր որինակ: Պետական բանկի հայաստանի գրասենյակը, քննության առնելով զանազան կազմակերպությունների արդիները, կազմում եր իր յեռամոյա վարկային ծրագրը, վորը և ներկայացնում եր ի հաստատություն թիֆլու—պետրանկի Անդրկովկասյան գրասենյակին: Վերջինս ծրագրիները հաստատելուց հետո, հայտնում եր Հայաստանի գրասենյակին՝ հաճախորդների վարկավորման լիմիտները: Սովորաբար այդ լիմիտները չելին համապատասխանում Հայաստանի գրասենյակի կողմից սահմանված լիմիտներին: Յեթի կոնսերվի որդարանի համար տեղում նախատեսնեած և 300.000 ռ. լիմիտ, վորը հնարավորություն կատեղեր նրա արդինպլանի

լրիվ կատարմանը, Անդրկովկասյան գրասենյակը տառամբ եր լիմիտ 200.000 ռ.—առանց հայտնելու քե կոնսերվի գործարանի արդֆինուլանի վո՞ր հարվածի փոփոխման հաշվին և կատարվել լիմիտի կրթատումը։ Պարզ է, վոր տվյալ կազմակերպությունը, ունենալով իր հաստատված արդֆինուլանը և աշխատելով նրա սահմաններում, բանկային լիմիտի կրծատման հետեւահքով կանգնում եր դժվարությունների առաջ։ Աշխատանքի նման ձեւը բացառություն չեր, այլ սովորական պրակտիկա, պետական բանկի վոչ կոնկրետ գործունեյուրիցան ցայտուն որինալիք։ Կամ ուրիշ գեղքիրում, լիմիտները յեռամսյակի սկզբում սահմանվում ենին համաձայն պլանների տվյալների, բայց դեռ առաջին ամսվա վերջը վոփոխության ենին յենթարկվում, առանց հայտնելու թե ի՞նչի հաշվին և կատարվում այդ փոփոխությունը։

Դա պլանավորում չեր, այլ պլանավորման աղակաղում։

Կուսակցությունը յերբեք չի դրել պետական բանկի առաջ ժողովրդական տնտեսության պլանավորման խնդիրը։

Վարկային սիստեմը իր աշխատանքներով պարտավոր է ողնելու կուսակցությանը և Խորհրդային իշխանությանը կոնտրոլի յենթարկելու ժողովրդական տնտեսության պլանի կատարումը, սուրբով։ Կոնտրոլի յենթարկելու սոցիալական շինարարությունը և ժամանակին ազգանշան տալու թերությունների ու ճեղքվածքների մասին։

Բայց այս աշխատանքը յերբեք կազ չուներ պետական բանկի՝ «պլանի հիման վրա» վարկավորման և պըլանավորման աշխատանքների հետ։

Վորապես արդյունք նման աշխատանքի՝ վարկային ուժորմի կիրառման ընթացքում հայտնաբերվեց նաև տնտեսավարական սկզբունքի կողմից խախնուրմ։ Աշտումատիզմը հաշիվների ձեվակերպման մեջ, վարկավորումը «ազլանի տակ», պետական բանկի առատաձեռնությունը ընուլցրին անտեսական կազմակերպությունների յեռանդը իրենց աշխատանքները կազմակերպելու և արդյունավետ դարձնելու ասպարիզում։

Ստեղծվել եր այսպիսի մի տրամադրություն, թե պետական բանկը ապահովում է տնտեսական կազմակերպությունների վնասների ծածկումը, վոր պլանային աշխատանքը հակասում է տնտեսավարական սկզբունքին, վոր մենք դանշում ենք սոցիալիզմի ըջանում, յերբ վարկը հանդիսանում է միակ պլանավորութակը։ Եռուխնիկ տրամադրություններ կային դրամանիշների վերացման ողտին։

Մոռացության եր արվում այն հանգամանքը, վոր մենք դանշում ենինք դեպի սոցիալիզմ տանող ճանապարհի վեա, Նեպի վերջին ըրջանում, վոր դրամանիշների վերացման համար բավական չե միայն կատարել տնտեսական փոփոխություններ, միկվիդացիոնի յենթարկելով մասնավոր առևտուրը և մասնավոր տնտեսությունները։ Դրամանիշները վերացնելու համար անհրաժեշտ ե ապահովիչ մթերքների բաշխման և փոխանակման դրծի կազմակերպումը։ Ահա ինչ եր գրում այդ մասին ընկ. Լենինը։

«Հնարավո՞ր և արդյոք նրանք (դրամանիշները) միանգամից վոչնչացնել։ Վոչ։ Դեռ սոցիալիստական հեղափոխությունից առաջ սոցիալիստները գրել են,

Վորը դրամը միանգամից վերացնելը հնարավոր չէ, իսկ մենք փարձով կարող ենք այդ հաստատել: Անհրաժեշտ են չափազանց շատ տեխնիկական, և վորը ավելի կարելոր ե, դժվար ու կազմակերպչական նվազումներ, վոր հնարավոր լինի վերացնել դրամի գործածությունը» (ՀԵՆԻՆ, Հասոր 16. հջ 208).

«Դրամը միանգամից վոչնչացնել հնարավոր չէ: Դրամը վերացնելու համար անհրաժեշտ է կազմակերպի 100 միլիոն մարդկանց համար մթերքների բաշխումը—իսկ դա յերկար տարիների գործ ե: (ՀԵՆԻՆ Հասոր 16 հջ 218):

Վորպես արդյունք նման աշխատանքի այսոր տեսնում ենք այն, վոր մի շարք կազմակերպություններ (իսկ նրանք կազմում են մեր կազմակերպությունների մեծամասնությունը) յերբեք չեն մտածել իրենց աշխատանքների կարգավորման մասին և խոշոր վնասներով փակել են իրենց հաջիպները: Զարդարացնելով իրենց դոյությունը, նրանք շատ աղատ ու համարձակ կերպով ուղղովել են պետական բանկի վարկից և շատ դեպքերում մի քիչ ել ավել են սոտացել:

Ահա այն, ինչ մենք վերը անվանեցինք վարկային ռեֆորմի սկզբունքների աղավաղում: Այսպես շարունակել չի կարելի: Անհրաժեշտ եր վերջ դնել այդ այլանդակություններին, վորոնք տեղի եյին ունեցել թե պետական բանկում և թե տնտեսական կազմակերպություններում: Յեկ Համամիութենական ժողկոմիորչը իր 1931 թվի հունվարի 14-ի վորոշումով գալիս եր վորոշ ուղղումներ մտցնելու 1930 թվի հունվարի 30-ի վարկային ռեֆորմի մեջ, 1931 թվի մարտի 20-ի լրացուցիչ վորոշումով ընդգծվում եյին պետական բանկի

և տնտեսական կազմակերպությունների մայիսի մեկնոց հետո կատարվելիք աշխատանքի ուղին:

Միջազներ եյին մշակվում վերացնելու յիշած թերություններն ու աղավաղումները, և վերակառուցելու ֆինանսական-բանկային ապարատի աշխատանքները որսուրեք զարգացող և ծավալվող սոցիալիստական տընտեսության պահանջների համաձայն:

Կանգ առնենք վարկային ռեֆորմի փոփոխության հիմնական խնդիրների վրա:

4. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Վորոնչք եյին վարկային ռեֆորմի փոփոխության հիմնական մոմենտները.

1. Ավտոմատիզմի վերացումը,

2. Վարկավորման ձեւի փոփոխումը և պետական բանկը՝ ոռուրլու միջոցով ժողովրդական տնտեսության զարգացումը կոնտրոլի յենթարկող կազմակերպության վերածելը:

3. Ցնորեսավարական սկզբունքի ամրացումը:

Խոսելով «ավտոմատիզմի» մասին, մենք պարզեցինք նրա բացասական հետեւանքները՝ թե պետական բանկի ֆինանսների, և թե կազմակերպությունների աշխատանքներում: Անհրաժեշտ եր ստեղծել նոր փոխարարերություններ արդյունաբերության և առևտրական կազմակեպությունների միջև, վորպեսզի հնարավորությունն ստեղծվեր վերացնելու կատարված թերությունները: Յեկ Համամիութենական ժողկոմիորչը իր 1931 թվի հունվարի 14-ի վորոշումով առաջարկում է կերառել կյանքում ակցեպտի ձեւը: Ի՞նչ ե ակցեպտը:

Հիմնական սկզբունքը, վորը դրվում ե պետական

բանկի գործունեյության մեջ, դա հաշիվների ձևակերպման ժամանակ զնորդի համաձայնությունն ունենալու անհրաժեշտությունն է։ Գնորդը տեր և զառնում իր հաշվին, նա հնարավորություն ունի ինքը կարդավորելու, պլանային հունի մեջ զնելու իր դրամական միջոցների ծափառումը։ Առանց նրա համաձայնության վոչ վոք իրավունք չունի նրա հաշվից գումարներ դուրս կրելու։ Աշխատանքի այս ձեվին անցնելը լոկ տեինիկական փոփոխություն չե։ Նրա հիմքում դրված և վարկավորման նոր ձեվի կիրառումը, աղահովելով արդֆինպլանների կատարման վերահսկողությունը և պայմանագրերի լրիվ ու ժամանակին իրագործումը։

Ենչեալ այժմ գոյություն ունեցող «պլանի հիման վրա» կատարվող վարկավորումը վերացվում է։ Մայիսի մեկից սկսած վարկավորումը կատարվում և տնտեսական առանձին նշանակություն ունեցող դորձիքների շուրջը կնքված պայմանագրերի և նրանց կատարման հիման վրա։ Խոսենք որինակներով վարկավորման նոր ձեւը ավելի պարզ և հասկանալի դարձնելու համար։

Ենթադրենք, վոր կոնսերվի գործարանը 2-րդ յեռամսյակում 750.000 ռ. արտադրանք տալու համար կարիք ունի 300.000 ռ. վարկի։ Նախքան գործի ձեռնարկելը, կոնսերվի գործարանը պետք է ապահովի իր արտադրությունը հում նյութով։ Ուստի նա պարտավոր և համապատասխան պայմանագրեր կնքելու այն բոլոր կազմակերպությունների հետ, վորոնք նրան հում նյութ են մատակարարում։ Բացի այդ՝ նա պետք է նախապես աղահովի իր արտադրանքի ուսելիղացիան, ուստի նախապես պետք է պայմանագրեր կնքի այն բոլոր կազմակերպությունների հետ, վորոնք նրանք պահպան միան 150.000 ռ. վարկ։ Այսինքն 50 տոկոսով

քը պետք է ուսելիղացիայի յենթարկեն։ Այսպիսով, կոնսերվի գործարանը յերկրորդ յեռամսյակի արդֆինպլանի հետ միասին պետք է ունենա մի շարք պարմանագրեր, վորոնք պայմանավորելու յեն արդֆինպլանի կատարումը և արտահայտելու յեն գործարանի 2-րդ յեռամսյակում կատարվելիք աշխատանքի բովանդակությունը։

Այդ պայմանագրերի ու նրանց հիման վրա կազմված արդֆինպլաններից յենելով, պետական զեկալիագում մարմինները վորոշելու յեն գործարարող պլանային մարմինների կատարման լիմիտը, վորը տվյալ դեպքում մենք վեցըրինք 300.000 ռ.։ Ուստի հիմնական մուժինսներից մեկն այն ե, վոր լիմիտների սահմանումը կատարվում և վոչ թե պետական բանկի կողմից, ինչպես կատարվում եր մինչեւ այժմ, այլ կատարվելու յեպետական պլանային հանձնաժողովի և զեկավար մարմինների կողմից։ Բայց լիմիտի սահմանումը դեռ չի նշանակում, վոր կոնսերվի գործարանը իրավունք ունի ոգտվելու վարկից։ Ինչպես վերեվումը չեցուցինք, վարկի տալը պայմանագրված և կնքված սկայանագրերի փաստացի կատարումով, կամ այլ խոսքով, արդֆինպլանների կատարումով։ Ամեն անգամ վարկի պահանջ ներկայացնելիս պետք է ներկայացնի և իր արդֆինպլանի կատարումն և ստանա վարկ միայն այդ պահի կատարման չափով։ Ենթե կոնսերվի գործարանը յերկրորդ յեռամսյակում փոխանակ տալու 750.000 ռուբ. արտադրանք, տա միայն 370.000 ռ. արտադրանք, նա փոխանակ 300.000 ռ. վարկ ստանալու, կատանա միայն 50 տոկոսով

պակաս, քանի վոր 50 տոկոսով պակաս արտադրանք ե տվել:

Պարզ է, վոր վարկառվորման այս ձեւ ամեն ըստն հապեցարագություն և ստեղծում պարզելու տվյալ ձեռնարկության դրությունը և ժամանակին աղջանշան տառալու հավանական ճեղքվածքները կանխելու համար: Այսուղ իրոք պետական բանկը հնարավորություն կունենա իր ոռւբլու միջոցով կոնտրոլի յննթարկելու ժողովական տնտեսության ընդհանուր սլանի կատարումը:

Ի՞նչ նշանակություն ունի «ակցեպտը» նման աշխատանքի պայմաններում: Կնքելով պայմանագրեր՝ ամեն մի կազմակերպություն իր վրա վերցնում ե վորոշ պարտականություններ՝ արտադրել վորոշ տեսակի, վորակի ու քանակի ապրանքներ: Ստանալով ուղարկված ապրանքի հաշվի-Փակտուրան՝ ամեն մի կազմակերպություն նախքան իր համաձայնությունը տալու պետական բանկին՝ այդ գումարը իր հաշվից դուրս գրելու համար, հնարավորություն ունի ստուգելու, թե ուղարկված ապրանքը վո՞ր չափով համապատասխանում ե կնքված պայմանագրերի պայմաններին: Դա նշանակում է, վոր վարկային սեֆորմի փոփոխությունը դալիս և ամրացնելու տնտեսական կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի նիշու և ժամանակին կատարումը և նպաստելու յեւ ապրանքների թեքանական և թե վորակական ցուցանիշների բարձրացմանը և ինքնարժեքի իշեցմանը:

Վարկավորման աշխատանքի ճեղերի փոփոխման հետ միասին, տնտեսական կազմակերպությունների առաջ սուր կերպով դրված և տնտեսավարական սկզբունքի մեջ կիրառման խնդիրը: Ամեն մի կազմակերպու-

թյուն պետք է արդարացնի իր գոյությունը, ծածկի իր արտադրության վրա կատարված ծախսերը և վորոշության վրա կատարական կուտակում գոյացնի, վորով հնարավոր վիճի իր աշխատանքը ել ավելի լայնացնելու և ծավալելու: Պետք է մեր տնտեսավարները սովորեն դեկավարել իրենց ձեռնարկությունները և արտադրությունները: Պետք է այնպես անել, վոր նրանք ամեն ըստն մտածեն իրենց գործունեյությունը բարելավելու և արդյունավետ դարձնելու մասին:

Տնտեսավարական սկզբունքը Նեպի զարգացման ներկա ժամանակաշրջանում հանդիսանում է «Համայնացված սեկտորի անտեսական կազմակերպությունների կառավարման կարելոր լծակներից» մեկը: Վերջ և արդվելու տնտեսական կազմակերպությունների անփոփթ վերաբերմունքին վեպի իրենց Փինանսական միջոցների կուտակումը և ինքարժեքի իշեցման խնդիրը: Ամեն մի ձեռնարկություն պարտավոր ե իր տնտեսական գործունեյությունը արտահայտող բարակար ամեն ամիս հրատարակել և դնել աշխատավորական մասամբների քննության, վորովհետեւ բարակար ամեն բոլոր ճիշտ արտահայտում և նրա գործունեյության ընթացքի դրական ու բացասական կողմերը:

Միանկամայն պարզ է, վոր ոռւբլու միջոցով բարձրակողմանի կերպով ստուգման են յենթարկվում առանձին ձեռնարկությունների կամ արտադրությունների աշխատանքը, յերբ ամեն քայլափոխին շեշտվում ե վարկավորման վրա մասամբ կիրաւում անհամար տնտեսավարական սկզբունքի կիրաւում անհամար էշտությունը, յերբ վարկավորման աշխատանքները կատարվում են իրոք կնքված գործարքների շուրջը, տնտեսական կազմակերպությունների առաջ զրկում է հետեւյալ խնդիրը՝

Կարել իրենց ներքին ռեսուրսները, ամենաարդյունավետ կերպով սպասագործելու սարքավորումը, ունեցրվածները ու բանվորական ուժը, խնայողություն ու ռացիոնալացում մտցնել հում նյութի գործածման մեջ, վորապեսզի այս բոլոր աշխատանքները նպաստեն տվյալ ձեռնարկության կամ արտադրության անորգելք գորգացման:

5. ՌԵՖՈՐՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրը և Միության վողջ աշխատավորական մասսաների գործն է: Առանց մասսաների լայն մասնակցությանը, առանց նրանց ուշադրությունը այս կամ այն բնադրավառում կատարվող աշխատանքների վրա կենտրոնացնելու, անհնար և կատարել այն հեղաշրջումը, վորին մենք ձգտում ենք: Առաջի և վարկային ու փորմի փոփոխության հետ կապված խնդիրների կերպումը պետք է կատարվի մասսաների միջոցով, նրանց ակտիվ մասնակցությամբ: Նամանավանդայժմ, յերբ վարկավորման աշխատանքները սերտորեն կապված են ձեռնարկությունների արդինողանակների ցուցանիշների կատարման հետ, աշխատավորական մասսաների ակտիվ մասնակցությունը վճռական նշանակություն ունի այդ աշխատանքների կարգավորման համար:

Սրբիքինականների կազմելու, ինչպես նաև պայմանագրերի կնքման աշխատանքները պետք է զարգացն աշխատավորական մասսաների ուշադրության կենտրոնը: Թող նրանք իմանան, ինչորիսի պարտավորությունը:

Պություններ ե վերցնում իր վրա իրնց գործարանը, ձեռնարկությունը, չափեն այդ պարագայորությունները իրենց ուժերով և հնարավորություններով ու համոգված կերպով, գիտակցորեն գործի անցնեն և կատարեն արդիքինպանները:

Նրանք պետք ե և մասնակից գտննան պլանների ու պայմանագրերի կատարման ստուգման աշխատանքներին, ծավալեն սոցիալիստական մըզակցությունը և հարվածայնությունը, նպատակ ունենալով նորմայ հունի մեջ դնել ձեռնարկության աշխատանքը:

Տնտեսական և արտադրական խորհրդակցությունների հիմնական աշխատանքներից մեկը պիտի լինի՝ քննության առնել ձեռնարկության հետ կապված արդիքինապլանները, նրանց կիրառման խնդիրները, անշուշտայդ աշխատանքին մասնակից դարձնելով լայն աշխատավորական մասսաները: Միայն այսպիսով հնարավոր կլինի վերացնելու ձեղքվածքները և նորմայ հունի մեջ դնել ձեռնարկությունների և արտադրությունների աշխատանքները:

Խոշոր նշանակություն ունի վարկային ռեֆորմի փոփոխությունների կիրառման դործում պետական բանկի ապարատի կարգավորման խնդիրը: Այն քարացած, բյուրոկրատական աշխատանքի ձևը, վորբ մինչեվ այժմ գոյություն և ունեցել պետականկում, յերեք չե համապատասխանում ժողովրդական տնտեսության զարգացման պահանջներին: Ֆինանսական սիստեմը պետք է իր աշխատանքներով հետ չմնա ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերից: Իսկ զրա համար անհրաժեշտ է ճկունություն, արագ չարժ վելու ունակություն, մի հանդամանք, վորը մեծ մասամբ բացակայում և պետական բանկի պրակտիկայում: Պետք է վերջ դնել այն

բահկային կոնսերվատիվմին, վորը մինչեվ այժմ տիրապեսուն և պետական բանկի նլրաւմ, վերսկառուցել նրա աշխատանիքի ձեւիերը և այդպիսով դարձնել նրան իբր ժաղավրդական տեսեսություն սոցիալիստական վերակառուցման ֆինանսական միակ կենտրոն:

Բանվորությունը և աշխատավորական մասսաները պետք ե իրաղեկ լինեն, մասնակցեն պետական բանկի գործունեյությանը: Իսկ դա հարավոր է, իբր պետական բանկը դառնա մասսայական կազմակերպություն, իր գործունեյությանը տա լայն հասարակական բնույթ և քանդի այն չինական պարիսպները, վորոնք մինչեվ այժմ հեռու յեն պահում նրա գործունեյությունը աշխատավորական մասսաներից: Անհրաժեշտ և պետական բանկի բաժանմունքների և զրասնյակների վրա սահմանել արտադրությունների և ձեռնարկությունների բանվորների շեֆություն, վեր այսպիսով հնարավոր լինի ազատել նրանց հականեղափոխական կոնդրատելյան և ոպորտոնիստական տարրերից և նպաստավոր սկայմաններ ստեղծել նրանց աշխատանքի կանոնավորման համար:

Միայն այդպիսով հարավոր կլինի իրոք վերածել պետական բանկը համապատասխան հաշվապահական, առլրանքների արտադրության և բաշխման համապետական կենտրոնի և դարձնել այն սոցիալիստական հասարակության վողնաշարը:

«Տնտեսավարական սկզբանիքի կիրառման համար—վարկային ռեփորտի աղավաղումների դիմ»—ահա այն լոգունգը, վորը ներկա ժամանակաշրջանում կուսակցությունը և ն. իշխանությունը դնում ե մեր առաջ և պահպան ե իրագործել կյանքում:

Համախմբվել այդ լոգունգի շուրջը, լարել մեր ուժերը վերացնելու վարկային ռեփորտի կիրառման ընթացքում կատարված սխալները, զիտակցելով, վոր այդպիսով հնարավոր և աղաւագվել ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հնդամյա պլանի, ինչպես և հնդամյակի յերրորդ վճռական տարվա պլանի կատարումը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0193234

480

ԳՐԱԸ 10 ԿԱՊ. (1 և.)



Տ. ՏԱԳՎՈՐՅԱՆ

ЗА ПРИМЕНЕНИЕ ХОЗЯЙСТВЕННОГО ПРИНЦИПА—ПРОТИВ ИСКАЖЕНИЙ КРЕДИТНОЙ РЕФОРМЫ

Госиздат ССР Армении
Эревань—1981

332 · 7
12 - 13